ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբեր 2013թ. N 314

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի «բ» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի բնակիչ Բալասան Գևորգյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2013 թվականի հուլիսի 24-ի եզրակացությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Բալասան Գևորգյանին հատկացնել 60000 /վաթսուն հազար/ դրամ միանվագ օգնություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ. Կարապետյան/՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

60

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի ՍՇՏԳ-ի կողմից Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի բնակչուհի Բալասան Գևորգյանի ընտանիքի սոցիալական վիճակի ուսումնասիրությունից պարզվեց. .

Բ՚ասան Գևորգյանի ընտանիքը կազմված է 7 շնչից:Ամուսինը մեկ ամիս է ինչ մահացել է, ունի երեք անչափահաս երեխաներ՝ երկուսը դպրոցական են, իր խնամքի տակ են գտնվում նաև սկեսրայրը՝ 2-րդ խմբի հաշմանդամ, ստանում է 17058դրամ թոշակ, սկեսրայրի հայրն ու մայրը, որոնք կենսաթոշակառու են և ստանում են համապատասխանաբար 26356դրամ և 28624դրամ թոշակ:

Ընտանիքը հաշվառված է Արմավիրի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, ստանում է 34000դրամ նպաստ:

ԱՐՄԱՎԻՐԻ ՍՇՏԳ-Ի ՊԵՏ՝ Ռ.ԱՐՏԵՆՅԱՆ

կատարող՝ Ա. Ստեփանյան

24.07.2013թ

04.02.2013թ №38
40.0